

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/1**  
**13 մարտի 2018թ.**

Քննարկվեց «ԼԻԳԱ ՓՐԵՍ» ՍՊԸ բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.12.2017թ. N111596 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.12.2017թ. N111596 հանձնարարագրի համաձայն «ԼԻԳԱ ՓՐԵՍ» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.12.2017թ. N111596 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 60.000 դրամ: Ակտով խախտումն արձանագրելու համար հիմք է հանդիսացել Լուսինեն Մնացականյանի դիմում-բողոքը:

Նշվեց նաև, որ Լուսինեն Մնացականյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «ԼԻԳԱ ՓՐԵՍ» ՍՊԸ-ի՝ աշխատանքային հարաբերությունների փաստը հաստատելու և չվճարված աշխատավարձը բռնագանձելու պահանջի մասին: Երևան քաղաքի Կենտրոն և Նուրբ-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.08.2017թ. վճռով (գործ թիվ ԵԿԴ/3336/02/16) Լուսինեն Մնացականյանի հայցը մերժվել է: Լուսինեն Մնացականյանի կողմից նշված վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով և նշված գործով դեռ առկա չէ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ թիվ ԵԿԴ/3336/02/16 գործով առկա չէ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ և անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԼԻԳԱ ՓՐԵՍ» ՍՊԸ բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

«ԼԻԳԱ ՓՐԵՍ» ՍՊԸ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ԿԱ ՊԵԿ-ի մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական ղեկավարում:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ